ՄԱՐԻՆԱ ՄԱՐՈՒԹՅԱՆ

ԹՈՒՅԼ ՏԵՍՆՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՏԵՍՈՂԱԿԱՆ ԸՆԿԱԼՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՐՑԵՐԻՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Հայտնի է, որ տեսողության խանգարումները մարդու կենսագործունեության ընթացքում նրան կանգնեցնում են մի շարք դժվարությունների առջև: Տուժում է նրանց տարածական կողմնորոշումը, առարկայական, խաղային, ուսումնական, աշխատանքային գործունեությունը և այլն (Մ.Ի.Զեմցովա 1956թ; Լ.Ի.Սոլնցևա 1980թ; Ռ.Ն.Ազարյան 1990թ, 1992թ; Լ.Ի.Պլակսինա 1998թ; Բ.Կ.Տուպոնոգով 2004թ և այլն): Այս ամենը կախված է տեսողական ընկալումից: Եթե պահպանված է տեսողական ընկալումը, ապա երեխան հեշտությամբ է յուրացնում իրեն ուղղված բոլոր առաջադրանքները, սոցիալական, կենցաղային հմտությունները և այլն: Այդ պատճառով հատուկ գրականությունում մեծ տեղ է հատկացվում տեսողական ընկալման զարգացմանը:

Վերը նշվածից ելնելով մեզ հետաքրքրում է, թե արդյոք ուսուցիչները, մանկավարժական բուհի ուսանողները ինչպիսի պատկերացում ունեն տեսողության խանգարումով երեխաների տեսողական ընկալման մասին, ծանոթ են այն զարգացնելու մեթոդներին, միջոցներին, ինչպես են անցկացնում շտկողական աշխատանքները և այլն: Այս հարցերի ուսումնասիրմանն է ուղղված տվյալ հետազոտությունը: Աշխատանքը անցկացնելուց կիրառել ենք հետևյալ հետազոտական մեթոդները. գիտամեթոդական գրականության ուսումնասիրում, առաջատար փորձի վերլուծում և համադրում, զրույց, հարցում, անկետավորում: Հետազոտությունը անց է կացվել 2005-2006 թվականներին, որում մասնակցություն են ցուցաբերել թույլ տեսնող երեխաների հատուկ դպրոցի ուսուցիչներ և դաստիարակներ (58), ներառական ուսուցմամբ դպրոցների մասնագետներ (27), ինչպես նաև մանկավարժական բուհի տիֆլոմանկավարժության բաժնի 50 ուսանող:

Անցկացված հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ ուսուցուցիչների մեծամասնությունը փորձառու են և ստաժավոր: Հարցվողների 52%-ը ունեն 10-ից մինչև 30 տարվա մանկավարժական փորձ: Մանկավարժների 90% - ը ունեն բարձրագույն կրթություն: Որպեսզի հետազոտությունը

լինի ավելի ամբողջական, փորձեցինք պարզել թե ուսուցիչները ի՞նչ առարկա են դասավանդում: Հարցման արդյունքում պարզ դարձավ, որ 60 % -ը աշխատում են որպես դասվար, 30% -ը դասավանդում են հումանիտար և տեխնիկական առարկաներ, իսկ 10% -ը կերպարվեստ, գծագրություն:

Ըստ ուսանողների հետ անցկացված հետազոտության տվյալների 44%-ը սովորում են իրենց ընտրված մասնագիտությամբ և ավարտելուց հետո 60% -ը կցանկանային աշխատել տվյալ մասնագիտությամբ:

Մեզ առաջին հերթին հետաքրքրում է, թե ինչպես են վերաբերվում հետազոտվողները ուսումնասիրվող նյութին, ինչ տեղ են հատկացնում տեսողական ընկալմանը, ի՞նչ միջոցներ և մեթոդներ են կիրառում այն զարգացնելու համար: Հետազոտության արդյունքները վկայում են, որ մեծամասնությունը (88%), ըստ իրենց, մեծ տեղ են հատկացնում մանկավարժական աշխատանքում տեսողական ընկալմանը, սակայն այն հարցին, թե «ի՞նչ է տեսողական ընկալումը» ուսուցիչները տվեցին տարբեր պատասխաններ: Օրինակ՝ «Նայել, դիտել, մտապահել» (46%), «Երբ տեսողությամբ ընկալվում է առարկայի ձևը, չափը, գույնը, ամբողջականությունը» (29%):

Այս հարցադրումը տրվեց նաև ուսանողներին, ապագա ուսուցիչներին՝ պարզելու համար նրանց պատկերացումները տեսողական ընկալման մասին: Պետք է նշել, որ նրանցից 20% - ը այս հարցին ընդհանրապես չեն պատասխանել, 14% - ը տվել են սխալ պատասխան, իսկ 66% - ը տվել են մոտավոր ճիշտ պատասխան:Այս ցուցանիշները վկայում են, որ հարցվողների մեծամասնությունը հավանաբար գործնականորեն չեն զբաղվում և չեն պատկերացնում, թե ինչ է տեսողական ընկալումը: Չեն կարողանում, դժվարանում են տալ նրա ճիշտ ձևակերպումը և օգտվում են մոտավոր ընդհանրացող հասկացություններից:

Հատկանշական է պարզել նաև ուսուցիչների կարծիքը այն հարցի ուղղությամբ, թե «ինչպե՞ս են նրանք զարգացնում տեսողական ընկալումը դասերի ընթացքում»; Տրվեցին բազմազան պատասխաններ: Մեծամասնությունը (60%) անկեղծորեն նշել են, որ հատուկ չեն զբաղվում այս հարցով: Հարցվողների մի մասը (14%) նշել են «հիմնականում կատարում ենք տեսողական վարժություններ», իսկ մյուս մասն էլ (20%). «օգտագործում ենք խորանարդիկներ,մեծ շրիֆտով գիր» պատասխանները: Այս տվյալները վկայում են այն մասին, որ ուսուցիչների մեծամասնությունը չեն գնահատում, անուշադրության են մատնում տեսողական ընկալման զարգացման կարևորությունը ուսումնական գործընթացում: Գործնական աշխատանքը ցույց է տալիս, որ ցուցաբերելով այսպիսի վերաբերմունք, խանգարվում է մի կարևոր սկզբունք՝ մնացորդային տեսողության պահպանում և զարգացում: Մեր կարծիքով սա

կապված է ոչ թե ժամանակի սղության, այլ տեսողության խանգարումով երեխաների տեսողական ընկալման զարգացմանը ուղղված ուսուցիչների և դաստիարակների անբավարար տեղեկացվածության հետ:

Համաձայն մեր հետազոտության հիմնախնդրի՝ մեզ հետաքրքրում է նաև, թե գի՞տեն արդյոք ուսուցիչները տեսողության խանգարումով երեխաների տեսողական ընկալման մակարդակը որոշող որևէ հատուկ թեստերի մասին:Ցավոք, հարցվողների մեծամասնությունը (78%) չտվեց որոշակի պատասխան:Ուսուցիչները և դաստիարակները նշել են, որ այդ հարցում հաճախակի խորհրդակցում են աչքի բժիշկի հետ:Այս ամենի հետ հանդերձ հարցվողները միանշանակ գտնում են, որ պետք է հատուկ զարգացնել տեսողության խանգարումով երեխաների տեսողական ընկալումը: Ուսուցիչները և դաստիարակները նշում են, որ իրենք այս հիմնախնդրին հիմնականում մոտենում են իրենց գիտելիքների և փորձի համաձայն:

Նրանցից մեծամասնությունը նշեցին, որ մեծ ուրախությամբ, հաճույքով կծանոթանային այդ թեստերին, կուսումնասիրեին այդ հատուկ գրականությունը, սակայն իրենց հասանելի գրականությունում իրենք չեն կարողանում գտնել այս հիմնախնդրին վերաբերող մայրենի լեզվով գրականություն:Դրա կարևորությունը նշում էին հարցվողների գերակշիռ մասը:

Զրուցելով մասնագետների հետ, մենք պարզեցինք, թե նրանք ինչպիսի մոտեցում ունեն այն հարցին,թե որ գործունեության ժամանակ է ավելի արդյունավետ զարգացնել տեսողական ընկալումը:Անկետաների վերլուծությունը վկայում է, որ ուսուցիչների և դաստիարակների կարծիքով ավելի արդյունավետ է զարգացնել տեսողական ընկալումը բոլոր գործունեությունների ժամանակ (68 %), սակայն (26%) առանձնացնում են խաղային գործունեությունը, իսկ 6% - ը գտնում են,որ պետք է զարգացնել ուսումնական, աշխատանքային և հատուկ պարապմունքների ընթացքում:

Այս հարցադրումը տրվեց նաև ուսանողներին: Պարզվեց, որ նրանց մեծամասնությունը (60%) կարևորում են խաղային գործունեությունը: Հարցվողների 10% - ը գտնում են, որ տեղական ընկալումը անհրաժեշտ է զարգացնել աշխատանքային,իսկ 14%-ը՝ բոլոր գործունեությունների ընթացքում:

Մենք գտնում ենք, որ կարևոր է նաև պարզաբանել այն, թե գիտեն հետազոտվողները արդյո՞ք տեսողական ընկալումը զարգացնող հատուկ խաղեր կամ կիրառում են դրանք ուսումնական գործունեության ընթացքում:

Ուսումնասիրությունները վկայում են, որ ոչ բոլոր հարցվող մասնագետները, գիտեն և կարող են ճիշտ կողմնորոշվել տեսողական ընկալումը զարգացնելու խաղերի ընտրման կիրառման գործընթացում: Նրանցից մի մասը

նշում են խաղեր, որոնք ոչ մի առնչություն չունեն տեսողության խանգարումով երեխաների տեսողական ընկալումը զարգացնելու հետ: Մյուսները նշեցին խաղեր, որոնք կիրառելի չեն այդ երեխաների համար և միայն ուսուցիչների և ուսանողների փոքր մասը կարողացան ճիշտ պատասխանել այս հարցին:

Հարցումների ընթացքում պարզեցինք նաև հետևյալ հարցի պատասխան ները. «Կիրառում եք արդյոք Ձեր աշխատանքում, որևէ մասնագիտական գրականություն ուղղված այս հիմնախնդրին »:

Չնայած ուսուցիչների մեծամասնությունը նշեց, որ ծանոթ են հատուկ գրականությանը, որը վերաբերում է տեսողական ընկալման զարգացմանը, սակայն միայն նրանց 44% - ը կարողացան նշել կոնկրետ գրականություն և հեղինակներին:

Ի տարբերություն ուսուցիչների ուսանողների մեծամասնությունը (86%) ծանոթ չէին և չկարողացան նշել այդ հարցի շուրջ որևէ մասնագիտական գրականություն:

Այսպիսով, հարցումներից,դիտարկումներից, զրույցներից պարզ դարձավ, որ մի կողմից բոլոր հետազոտվողները նշում էին թույլ տեսնող երեխաների տեսողական ընկալման զարգացման նշանակությունը և կարևորությունը, սակայն մյուս կողմից չէին ցուցաբերում համապատասխան գիտելիքներ միջոցների և մեթոդների ընտրման և կիրառման ժամանակ: Իրենց մանկավարժական գործընթացում լուրջ ուշադրություն չեն դարձնում այս հարցին: Նրանց մեծամասնությունը անկեղծորեն նշում է, որ չգիտե և չի օգտագործում հատուկ գրականություն, չունի համապատասխան գիտելիքներ և փորձ տեսողական ընկալման զարգացման վերաբերյալ:

Հետևաբար, տեսողական ընկալման զարգացման մեթոդների, միջոցների և մանկավարժական պայմանների մշակումը հատուկ դպրոցների պայմանում ունի կարևոր տեսական և գործնական նշանակություն:

Գրականություն

1. Азарян Р.Н. Как сохранить и улучшить зрение ребенка.- Ер. 1992г-56с.
2. Земцова М.И. Формирование зрительного восприятия у детей с нарушением зрения.-М.,1956г-167с.
3. Плаксина Л.И. Теоретические основы развития познавательной деятельности восприятия у детей с нарушением зрения.-М.,1998г-164с
4. Солнцева Л.И. Воспитание слепого ребенка.-М.,1980-210с.
5.Тупоногов Б.К. Основы корекционной педагогики.-М.,2004-465с.